ՀԿԴ/0028/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 սեպտեմբերի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԴ/0095/01/19) քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2019 թվականի թվականի օգոստոսի 6-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Շողիկ Օնիկի Հախվերդյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 6 դրվագով՝ 314-րդ հոդվածի 1-ին մասով, 2 դրվագով՝ 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Արմեն Սիմոնի Սիմոնյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2019 թվականի օգոստոսի 6-ին թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործն ընդունվել է դատավոր Թ.Պողոսյանի վարույթ և 2019 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

2019 թվականի օգոստոսի 30-ին դատարանն անցել է դատաքննության (հետազոտվել են գործի նյութերը, հարցաքննվել են վկաներ):

Դատավոր Թ.Պողոսյանի պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործը 2022 թվականի օգոստոսի 9-ին մակագրվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Բեգլարյանին և 2022 թվականի օգոստոսի 10-ին քրեական գործն ընդունվել է վարույթ:

2022 թվականի օգոստոսի 25-ին դատավոր Ն.Բեգլարյանը որոշում է կայացրել թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2022 թվականի սեպտեմբերի 2-ին նշված քրեական գործին շնորհվել է թիվ ՀԿԴ/0028/01/22 համարը և այն մակագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ.Դոլմազյանին: 2022 թվականի սեպտեմբերի 5-ին նշված քրեական գործն ընդունվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ.Դոլմազյանի վարույթ:

2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ.Դոլմազյանը 2022 թվականի սեպտեմբերի 5-ին որոշում է կայացրել ընդդատության մասին վեճը լուծելու համար գործը ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

3. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 7-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Բեգլարյանը 2022 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Բարձրագույն դատական խորհրդի՝ թիվ ԲԴԽ-72-Ո-226 որոշմամբ՝ դատավոր Թ.Պողոսյանի լիազորությունները*

պաշտոնավարման տարիքը լրանալու պատճառաբանությամբ 2022 թվականի հուլիսի 27-ից դադարելու հիմքով գործը 2022 թվականի օգոստոսի 9-ին վերամակագրվել է դատավոր Ն.Բեգլարյանին, և վարույթ է ընդունվել նույն թվականի օգոստոսի 10-ին:

Բարձրագույն դատական խորհրդի՝ 2022 թվականի օգոստոսի 22-ի ԲԴԽ-79-Ո-261 որոշման համաձայն՝ «(...) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև [ԲԴԽ-16-Ն-6 որոշմամբ] սահմանված կարգին համապատասխան (...)»:

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 20. (...) [Վ]երաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորներն այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են սույն հոդվածով սահմանված կարգով երեքական առանձին դատավորներ նշանակվելու պահից:

(...) 22. Սույն հոդվածի 19-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո (...) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվում են բացառապես հակակոռուպցիոն դատարանի կողմից:

23. Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (...) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ (…)»:

ՀՀ 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածի համաձայն՝ 179-րդ (2-րդ մաս, կետ 1, 3-րդ մաս, եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 308-րդ և 314-րդ հոդվածները ներառված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:

ՀՀ 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ «(…) Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

(…) 6) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին. (…)»:

Նույն օրենսգրքի 298-րդ հոդվածի համաձայն՝ «(…) Եթե դատարանը պարզի, որ գործն իրեն ընդդատյա չէ, ապա նա որոշում է կայացնում գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին՝ նշելով նման որոշման իրավաբանական հիմքերը և դատարանը, որին ուղարկվում է գործը (…)»:

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործով դեռևս անցում չի կատարվել դատաքննության փուլ, գտնում եմ, որ նշված քրեական գործը պետք է ըստ ընդդատության ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (…)»[1]*:*

5. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Գտնում եմ, որ թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործի քննությունը պետք է շարունակվեր Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 10-12:

բացառությունը, այն է. «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ», կիրառելի սույն գործով:

Ինչպես նշվել է վերևում 2019 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործը դատական քննության է նշանակվել 2019 թվականի օգոստոսի 30-ին և նույն օրը կայացած դատական նիստում Դատարանն, ավարտելով դատական նիստի նախապատրաստական մասը, անցել է դատաքննության:

Դատավոր Ն.Բեգլարյանը թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործը վարույթ ընդունելիս ղեկավարվել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 291-րդ հոդվածով՝ հաշվի առնելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորումը:

Այսինքն՝ դատավոր Ն.Բեգլարյանը հիմք է ընդունել, որ դեռևս 2019 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացվել թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

Նմանապես, նույն գործով Դատարանը 2019 թվականի օգոստոսի 30-ին անցել է դատաքննության:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը վերսկսվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի միևնույն՝ «վերսկսել» կամ «վերսկսվել» հասկացությունները պարունակող հիշյալ և այլ հոդվածները վերսկսման հասկացության էությունը չեն բացահայտում, մասնավորապես, վերսկսման ձևի տեսանկյունից:

Միաժամանակ «վերսկսել» կամ «վերսկսվել» հասկացությունները պարունակող ոչ մի նորմ չի նախատեսում այդ նորմերով նախատեսված գործընթացները սկսել սկզբից:

Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գործով վարույթի կասեցման կամ կարճման պայմաններում, այդ որոշումները վերացնելու դեպքում՝ նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 260-րդ և 264-րդ հոդվածներով վարույթը վերսկսելիս կամ այն վերսկսվելիս, դրան նախորդած քննությունը՝ կայացված դատավարական որոշումները, կատարված քննչական ու դատավարական գործողությունները նորից չեն իրականացվում, այլ վարույթը շարունակվում է ընդհատման պահից: Կամ օրինակ, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 5-րդ, 355-րդ հոդվածի 3-րդ կամ 363-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված դեպքերում Դատարանը որոշում է վերսկսել դատաքննությունը, ապա այդ ժամանակ նույնպես դատաքննությունը չի իրականացվում սկզբից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը քրեադատավարական կարգով քննվող քրեական գործերով դատավորի փոխարինման դեպքում նախատեսել է գործի քննության շարունակելիություն՝ փոխարինվող դատավորի կողմից այն վերսկսելու միջոցով:

Որպես ապացույց կարելի է նշել այն, որ նույն հարցի առնչությամբ նույն մարմնի կողմից ընդունված իրավաբանական նույն ուժն ունեցող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, օրենսդիրը սահմանել է այլ կարգավորում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Դատարանի կազմի, այսինքն՝ դատավորի փոփոխության դեպքում՝ դատավորի կողմից գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացվելուց հետո գործի քննությունն սկսվում է սկզբից:

Գտնում եմ, որ օրենսդրի կողմից քրեական դատավարության առնչությամբ նախատեսվել է տարբերվող կարգավորում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործի քննությունը ենթադրում է առավել ինտենսիվ միջամտություն անձի հիմնական իրավունքներին և ազատություններին, մասնավորապես,

քրեական գործի քննության ընթացքում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառումը, ինչը կարող է դրսևորվել անձի՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակմամբ, գույքը կալանքի տակ գտնվելու դեպքում՝ սեփականությունից անարգել օգտվելու անձի իրավունքի սահմանափակմամբ և այլն:

Բացի այդ, հաշվի առնելով քրեական գործը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու օրենսդրությամբ սահմանված պահանջի ապահովման անհրաժեշտությունը, դատավորի փոխարինման դեպքում օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել՝ սահմանելով քրեական գործի վերսկսում (շարունակելիություն) գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից:

Ավելին՝ օրենսդրի կողմից նախատեսված տարբեր իրավակարգավորումներից հետևում է, որ, եթե օրենսդիրը նպատակ հետապնդեր սահմանելու քրեադատավարական կարգով գործը քննող դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից գործի քննության իրականացում անմիջապես սկզբից, ապա այդպիսի կարգավորումը հստակ կամրագրվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Միաժամանակ, քրեական գործի քննության շարունակելիության (վերսկսման) վերաբերյալ կարգավորում նախատեսելը պայմանավորված է գործով նախկին դատավորի կողմից արդեն իսկ կատարված մի շարք դատավարական գործողություններով և դրանցով պայմանավորված արդյունքների առկայությամբ:

Օրինակ՝ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված 15 օրյա ժամկետում Դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու հարցը քննարկած լինելու պայմաններում քրեական գործը վարույթ ընդունած նոր դատավորը նախնական նիստ չի հրավիրում՝ համարելով, որ այդ հարցն արդեն իսկ քննարկվել և լուծվել է:

Միևնույն ժամանակ, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածով նախատեսված «գործի քննությունը վերսկսվում է» արտահայտությունն իմպերատիվ կերպով մեկնաբանվի այնպես, որ քննությունը պետք է սկսվի սկզբից, ապա մինչ այդ դատաքննության ընթացքում Դատարանի կողմից ձեռք բերված

ցանկացած ապացույց պետք է կորցնի իր նշանակությունը (ճանաչվի անթույլատրելի), դրանից բխող հետևանքներով: Մինչդեռ, քրեական գործը վարույթ ընդունած նոր դատավորը, շարունակելով գործի քննությունը, ըստ անհրաժեշտության կարող է լրացուցիչ հարցաքննել արդեն իսկ հարցաքննված յուրաքանչյուր անձի (իրավակիրառ պրակտիկայում նման բազմաթիվ դեպքեր կան, երբ քրեական գործը վարույթ ընդունած նոր դատավորը գործի քննությունը շարունակել է ընդհատման պահից):

Գործի քննությունը վերսկսելու և ընդհատման պահից շարունակելու դեպքում նախորդ դատաքննության արդյունքներն իրենց իրավաբանական ուժն ու նշանակությունը չեն կորցնում, միաժամանակ, այդպիսով ընձեռնվում է ողջամիտ ժամկետում գործի քննությունը շարունակելու և ավարտելու օբյեկտիվ հնարավորություն:

Միևնույն ժամանակ, եթե նույնիսկ գործի քննությունը չի շարունակվում ընդհատման պահից, այլ սկսվում է սկզբից, ապա պետք է սկսվի դատաքննության սկզբից, ինչը ևս ենթադրում է, որ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում եմ, որ թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԳ/0095/01/19) քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին վերաբաշխման ենթակա չէ և գործի քննությունը պետք է շարունակվի ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (...)»[2]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

6. Նախևառաջ հարկ է նշել, որ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ.Դոլմազյանը որոշում է կայացրել քրեական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 20-23:

օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից: Մինչև նշված հոդվածի համապատասխան կարգավորումը կիրառվելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին համապատասխան վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից՝ համապատասխան որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման կայացման օրվա դրությամբ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահը նշանակված չէ, ուստի ընդդատության մասին վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից:

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԳ/0095/01/19) քրեական գործն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, թե՞ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[3]:

10. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. Սույն գործով բարձրացված իրավական հարցին պատասխանելու և ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճը լուծելու համար անհրաժեշտ է անդրադառնալ դատավորի փոխարինումից հետո դատական վարույթը նորից սկսելու կառուցակարգին:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. *«Դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը վերսկսվում է»:*

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 269-րդ հոդվածը նույնպես նախատեսում է դատավորի փոխարինումից հետո դատական վարույթը նորից սկսելու կառուցակարգ: Այսպես՝ ՀՀ քրեական

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

դատավարության օրենսգրքի 269-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանում վարույթը պետք է իրականացվի դատարանի նույն կազմով:*

2. Վարույթին դատավորի մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է տվյալ դատարանի այլ դատավորով: Բացառությամբ սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի, դատավորի փոխարինումից հետո դատական վարույթն սկսվում է նորից: (…)»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ գործող և նախկին քրեադատավարական օրենսգրքերը սահմանում են դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունը վերստին սկսելու իմպերատիվ պահանջ, այսինքն օրենսդիրը քրեադատավարական կարգով քննվող քրեական գործերով դատավորի փոխարինման դեպքում չի նախատեսել փոխարինվող դատավորի կողմից գործի քննության շարունակելիություն: Գործի քննությունը վերստին սկսելու պահանջը կոչված է ապահովելու ապացույցների հետազոտման անմիջականությունը՝ դատավորի անփոփոխելիության օրենսդրական պահանջի համատեքստում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում *Moiseyev v. Russia* գործով[6] դիմումատուն բարձրացրել էր այն հարցը, որ դատական քննությունը դատավորի փոխարինման դեպքում ամեն անգամ սկսվել է նորից: Անդրադառնալով դատական քննությանը դատավորի մասնակցության անհնարության դեպքում այլ դատավորով փոխարինվելու պայմաններում գործի դատական քննությունը նորից սկսելու վերաբերյալ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի կիրառելիությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդար դատաքննության իրավունքի խախտում է արձանագրել միայն առանց հիմնավոր պատճառների նույն գործով 11 անգամ դատավորների փոխարինման մասով՝ իրավաչափ համարելով դատավորի փոխարինման դեպքում վարույթը նորից սկսելու օրենսդրական պահանջը:

14. Թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԴ/0095/01/19) քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Թ.Պողոսյանի

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Moiseyev v. Russia* գործով 2008 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 62936/00, 172-185-րդ կետեր:

պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ նշված քրեական գործը 2022 թվականի օգոստոսի 9-ին մակագրվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Բեգլարյանին և ընդունվել է վարույթ[7]:

2022 թվականի օգոստոսի 25-ին դատավոր Ն.Բեգլարյանը որոշում է կայացրել թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին: Որպես գործն ըստ ընդդատության ուղարկելու փաստական հիմք է դիտվել այն, որ նշված գործով դեռևս անցում չի կատարվել դատաքննության փուլ, իսկ իրավական հիմք են հանդիսացել ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերը, համաձայն որոնց՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վ.Դոլմազյանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, գտել է, որ թիվ ԱՎԴ/0095/01/19 քրեական գործի քննությունը պետք է շարունակվեր Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ դեռևս 2019 թվականի օգոստոսի 30-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Թ.Պողոսյանի նախագահությամբ անցել էր դատաքննության փուլ:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է արձանագրել, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Թ.Պողոսյանի պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ գործը դատավոր Ն.Բեգլարյանին վերամակագրված լինելու պայմաններում, գործի

[7] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

վարույթը սկսվել է նորից և անցում չի կատարվել դատաքննության: Ուստի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի ուժով, թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԴ/0095/01/19) քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՀԿԴ/0028/01/22 (ԱՎԴ/0095/01/19) քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ